Բանկի ղեկավարության պատասխանատվությունը

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ Բանկ) ղեկավարությունը պատասխանատու է Բանկի ֆինանսական վիճակը և ֆինանսական գործունեության արդյունքները, բոլոր էական առումներով , արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հետ կապված Բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

- բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- Միջազգային Ֆինանսական հաշվապահական ստանդարտների պահանջների պահպանման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար,
- բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման համար,
- բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Արա Կիրակոսյան
Վարչության նախագահ
29.04.2013թ.

Ռուզան Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ